# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔ

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 10

10 հոկտեմբերի 2024 թվական

## ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 9 անդամներ:
Բացակա էին՝ Կարեն Մանուկյանը, Մարտուն Խաչատրյանը, Վարուժան Հարությունյանը, Հովհաննես Մարգարյանը, Միեր Ներսիսյանը, Հերմինե Վարդանյանը:

**Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝**
Կարապետ Հակոբյանը, Նաիրա Հարությունյանը, Մերդինե Գուրգենյանը, Լիլիթ Գասպարյանը, Թամարա Գյադուկյանը, Արտակ Մելիքյանը:

**Նիստը վարում էր համայնքի ղեկավարի առաջին տեղակալ՝ Արտուշ Մանուկյանը,**
**Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Համլետ Ավետիսյանը**

Լսեցին

***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 26-Ի ԹԻՎ 10 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ԱՐՏՈՒՇ ՄԱՆՈՒԿՅԱՆ/***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ավագանին ***որոշում է՝***

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի Աշոցք բնակավայրի տարածքում գտնվող Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի սեփականություն հանդիսացող, 08-015-0028-0036 կադաստրային ծածկագրով հողամասը «Հյուսիսային ուղի տեղական ակտիվ խումբ» տարածքային զարգացման հասարակական կազմակերպությանը անհատույց (մշտական) օգտագործման իրավունքով տրամադրելու մասին /զեկուցող Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ղեկավարին փոխարինող Ա. Մանուկյան/:
2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի 2024 թվականի բյուջեով նախատեսված «Այլ նպաստներ բյուջեից» 4729 հոդվածից Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի բնակիչներին միանվագ դրամական օգնություն տրամադրելու մասին /զեկուցող Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ղեկավարին փոխարինող Ա. Մանուկյան/:
3. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի (Յողամարգ բնակավայր) սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողերից մրցույթային կարգով վարձակալության իրավունքով տրամադրելու, մեկնարկային գինը և պայմանները հաստատելու մասին /զեկուցող Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ղեկավարին փոխարինող Ա. Մանուկյան/:

4. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ավագանու 2022 թվականի ապրիլի 8-ի N 31-Լ որոշումը ուժը կորցրած ճանաչելու և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական տեխնիկաները, սարքավորումները և տրանսպորտային միջոցները «Աշոցք համայնքի կոմունալ սպասարկում» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը անհատույց օգտագործման իրավունքով տրամադրելու և ծառայությունների դիմաց վարձավճարների չափերը ու պայմանները սահմանելու մասին /զեկուցող Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ղեկավարին փոխարինող Ա. Մանուկյան/:
5. «Աշոցքի զբոսաշրջային բրենդի մշակում և ենթակառուցվածքների զարգացում» ծրագրի իրականացման համար որպես համայնքային ներդրում գումար տրամադրելու մասին /զեկուցող Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ղեկավարին փոխարինող Ա. Մանուկյան/:
6. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերը աճուրդային կարգով օտարելու և մեկնարկային գինը հաստատելու մասին /զեկուցող Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ղեկավարին փոխարինող Ա. Մանուկյան/:
7. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի Ղազանչի բնակավայրի 08-075-0020-0007 կադաստրային ծածկագրով հողամասում գտնվող քաղաքացիներ Արամայիս Էդուարդի Աթանեսյանի, Արմենուհի Արամայիսի Աթանեսյանի և Արմեն Արամայիսի Աթանեսյանի սեփականության իրավունքը ճանաչված բնակելի շինությունների զբաղեցրած հողամասի սահմանված չափից ավելի օգտագործվող հողամասն ուղղակի վաճառքի միջոցով օտարելու մասին /զեկուցող Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ղեկավարին փոխարինող Ա. Մանուկյան/:
8. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի Աշոցք բնակավայրի 08-015-0035-0005 կադաստրային ծածկագրով հողամասում գտնվող քաղաքացիներ Հենրիկ Հայկազի Ղազարյանի, Գոհար Համբարձումի Մկրտչյանի, Հայկազ Հենրիկի Մկրտչյանի և Հասմիկ Հենրիկի Մկրտչյանի սեփականության իրավունքը ճանաչված բնակելի շինությունների զբաղեցրած հողամասի սահմանված չափից ավելի օգտագործվող հողամասն ուղղակի վաճառքի միջոցով օտարելու մասին /զեկուցող Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ղեկավարին փոխարինող Ա. Մանուկյան/:
9. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 77-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին /զեկուցող Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ղեկավարին փոխարինող Ա. Մանուկյան/:
10. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ղեկավարի հաղորդումը համայնքի 2024 թվականի բյուջեի երրորդ եռամսյակի կատարման մասին /զեկուցող Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ղեկավարին փոխարինող Ա. Մանուկյան/:
11. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի Գոգհովիտ բնակավայրում «Արծաթե Սյուն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը թիվ ՇԱԹ-29/601 ընդերքօգտագործման իրավունքով տրամադրված տեղամասի շահագործման աշխատանքների ընդլայնմանը նախնական համաձայնություն տալու մասին /զեկուցող Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ղեկավարին փոխարինող Ա. Մանուկյան/:
12. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ավագանու 2024 թվականի երկրորդ գումարման նստաշրջանի հերթական նիստի գումարման օրը և ժամը սահմանելու մասին /զեկուցող Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ղեկավարին փոխարինող Ա. Մանուկյան/:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 69-Ա/

Լսեցին

***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՇՈՑՔ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ, 08-015-0028-0036 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ <<ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՈՒՂԻ ՏԵՂԱԿԱՆ ԱԿՏԻՎ ԽՈՒՄԲ>> ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ (ՄՇՏԱԿԱՆ) ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ԱՐՏՈՒՇ ՄԱՆՈՒԿՅԱՆ/***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 75-րդ հոդվածի, 1-ին մասի, 2-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգի 38-րդ կետի բ) ենթակետով, հիմք ընդունելով «LEAD4Shirak» ծրագրի թիմի ղեկավարի գրությունը և հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ավագանին ***որոշում է՝***

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի Աշոցք բնակավայրի տարածքում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող, 08-015-0028-0036 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության 0,05 հեկտար մակերեսով հողամասը (վկայական N 23092024-08-0011, հասցեն՝ Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, Աշոցք համայնք, գյուղ Աշոցք, 3-րդ թաղամաս 2-րդ փողոց, հողամաս 1) անհատույց, անորոշ ժամկետով (մշտական) օգտագործման իրավունքով տրամադրել «Տեղական դերակատարների զորեղացում հանուն զարգացման Շիրակի մարզում» ծրագրի շրջանակներում ձևավորված «Հյուսիսային ուղի տեղական ակտիվ խումբ» տարածքային զարգացման հասարակական կազմակերպությանը, տուրիստական ինֆորմացիոն կենտրոն (համապատասխան գույքով համալրված) ստեղծելու նպատակով:
2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ղեկավարին՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել սույն որոշման 1-ին կետում նշված հողամասն անհատույց (մշտական) օգտագործման տրամադրելու մասին պայմանագիր և օրենքով սահմանված կարգով ներկայացնել պետական գրանցման:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 70-Ա/

Լսեցին

***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ <<ԱՅԼ ՆՊԱՍՏՆԵՐ ԲՅՈՒՋԵԻՑ>> 4729 ՀՈԴՎԱԾԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻՆ ՄԻԱՆՎԱԳ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ԱՐՏՈՒՇ ՄԱՆՈՒԿՅԱՆ/***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 11-րդ մասով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ավագանու 2022 թվականի մարտի 9-ի թիվ 22-Ն որոշմամբ հաստատված կարգի 16-րդ կետով, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքում սոցիալապես անապահով ընտանիքներին սոցիալական աջակցություն ցուցաբերելու գործընթացն ապահովող մշտական հանձնաժողովի եզրակացությունը և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի թվով 4 բնակիչների

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ղեկավարին հասցեագրված դիմումները, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ավագանին ***որոշում է՝***

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի 2024 թվականի բյուջեով նախատեսված «Այլ նպաստներ բյուջեից» 4729 հոդվածից, /բաժին 10, խումբ 4, դաս 1, տող 3040 «Ընտանիքի անդամներ և զավակներ»/ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի թվով 4 բնակիչներին տրամադրել միանվագ դրամական օգնություն՝ 160000 /մեկ հարյուր վաթսուն հազար/ Հայաստանի Հանրապետության դրամ ընդհանուր գումարով՝ համաձայն հավելվածի:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 71-Ա/

Լսեցին

***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ (ՑՈՂԱՄԱՐԳ ԲՆԱԿԱՎԱՅՐ) ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԵՐԻՑ ՄՐՑՈՒՅԹԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ, ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ԱՐՏՈՒՇ ՄԱՆՈՒԿՅԱՆ/***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 48-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերով, 76-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերով, 81-րդ հոդվածի 3-րդ մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ավագանին ***որոշում է՝***

1. Համաձայնություն տալ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի (Ցողամարգ բնակավայր) սեփականություն հանդիսացող, սույն որոշման հավելվածում նշված գյուղատնտեսական նշանակության հողակտորների մրցույթի միջոցով վարձակալության իրավունքով տրամադրելու մասին համայնքի ղեկավարի առաջարկությանը և հայտարարել մրցույթ:
2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ղեկավարին փոխարինող Արտուշ Մանուկյանին՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և պայմաններով կազմակերպել և անցկացնել սույն որոշման հավելվածում նշված հողամասերի մրցույթի միջոցով վարձակալության իրավունքով օգտագործման տրամադրելու մրցույթը:

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-1

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 72-Ա/

Լսեցին

***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 8-Ի N 31-Լ ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՏԵԽՆԻԿԱՆԵՐԸ, ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ <<ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՄՈՒՆԱԼ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ ՎԱՐՁԱՎՃԱՐՆԵՐԻ ՉԱՓԵՐԸ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ԱՐՏՈՒՇ ՄԱՆՈՒԿՅԱՆ/***

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 19-րդ, 21-րդ կետերով և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի <<Աշոցք համայնքի կոմունալ սպասարկում>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության 24-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ավագանին ***որոշում է՝***

1. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ավագանու 2022 թվականի ապրիլի 8-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական տեխնիկաները, սարքավորումները և տրանսպորտային միջոցները «Աշոցք համայնքի կոմունալ սպասարկում» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը անհատույց օգտագործման իրավունքով տրամադրելու և ծառայությունների դիմաց վարձավճարների չափերը ու պայմանները սահմանելու մասին» N 31-Լ որոշումը:
2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական տեխնիկաները, սարքավորումները և տրանսպորտային միջոցները անհատույց օգտագործման իրավունքով տրամադրել «Աշոցք համայնքի կոմունալ սպասարկում» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը համաձայն հավելվածի 1-ի:
3. Սահմանել տրամադրվող տեխնիկաների և տրանսպորտային միջոցների մատուցած ծառայությունների դիմաց վարձավճարների չափը և պայմանները՝ համաձայն հավելվածի 2-ի:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 73-Լ/

Լսեցին

***<<ԱՇՈՑՔԻ ԶԲՈՍԱՇՐՋԱՅԻՆ ԲՐԵՆԴԻ ՄՇԱԿՈՒՄ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ>> ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՈՐՊԵՍ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՆԵՐԴՐՈՒՄ ԳՈՒՄԱՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ԱՐՏՈՒՇ ՄԱՆՈՒԿՅԱՆ/***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, 92-րդ հոդվածի 4-րդ մասով և հիմք ընդունելով «Ավստրիական զարգացման գործակալություն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության «LEAD4Shirak» ծրագրի շրջանակում հայտարարված մրցույթում Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի կողմից ներկայացված ծրագրին տրված հավանությունը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ավագանին ***որոշում է՝***

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի 2024 թվականի բյուջեի հագստի և սպորտի ծառայություններ ծրագրից 5511 հոդվածից «Աշոցքի զբոսաշրջային բրենդի մշակում և ենթակառուցվածքների զարգացում» ծրագրի իրականացման համար, որպես համայնքային ներդրում տրամադրել ծրագրի ընդհանուր արժեքի տասնմեկ տոկոսին՝ մեկ հազար հինգ հարյուր վաթսուն ինը եվրոին համապատասխանող փոխարժեքով Հայաստանի Հանրապետության դրամ, հաշվարկված տվյալ օրվա բանկային կուրսով:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 74-Ա/

Լսեցին

***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ԱՐՏՈՒՇ ՄԱՆՈՒԿՅԱՆ/***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերով, «Հրապարակային սակարկությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ավագանին ***որոշում է՝***

1. Համաձայնություն տալ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի սեփականությունը հանդիսացող հողամասերն՝ առավել արդյունավետ պահպանելու, բարելավելու և նպատակային նշանակությանը համապատասխան օգտագործելու նպատակով, աճուրդի միջոցով օտարել մասին Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ղեկավարի առաջարկությանը և հայտարարել աճուրդ:
2. Հաստատել աճուրդով օտարվող հողամասերի մեկնարկային գինն ու պայմանները՝ համաձայն հավելվածի:
3. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ղեկավարին՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և պայմաններով կազմակերպել և անցկացնել սույն որոշման հավելվածում նշված անշարժ գույքերի աճուրդի միջոցով օտարելու աճուրդը:

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-1

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 75-Ա/

Լսեցին

***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԱԶԱՆՉԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 08-075-0020-0007 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ԱՐԱՄԱՅԻՍ ԷԴՈՒԱՐԴԻ ԱԹԱՆԵՍՅԱՆԻ, ԱՐՄԵՆՈՒՀԻ ԱՐԱՄԱՅԻՍԻ ԱԹԱՆԵՍՅԱՆԻ ԵՎ ԱՐՄԵՆ ԱՐԱՄԱՅԻՍԻ ԱԹԱՆԵՍՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՉԱՓԻՑ ԱՎԵԼԻ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ԱՐՏՈՒՇ ՄԱՆՈՒԿՅԱՆ/***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետով, 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ավագանին ***որոշում է՝***

1. Քաղաքացիներ Արամայիս Էդուարդի Աթանեսյանի, Արմենուհի Արամայիսի Աթանեսյանի և Արմեն Արամայիսի Աթանեսյանի սեփականության իրավունքը ճանաչված, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի, Ղազանչի բնակավայրի 1-ին փողոց, բնակելի տուն 12 հասցեավորմամբ բնակելի նշանակությամբ շինություններով զբաղեցված հողամասի սահմանված չափից՝ 1000 քառակուսի մետրից ավելի օգտագործվող բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության, 1300.00 քառակուսի մետր մակերեսով հողամասն ուղղակի վաճառքի միջոցով օտարել Արամայիս Էդուարդի Աթանեսյանին (անձնագիր՝ AV 0341944, տրված՝ 28.07.2022թ, 034-ի կողմից, բնակության հասցե՝ ՀՀ Շիրակի մարզ, Աշոցք համայնք, գյուղ Ղազանչի, 1-ին փողոց, բնակելի տուն 12), Արմենուհի Արամայիսի Աթանեսյանին (անձնագիր՝ AR 0516738, տրված՝ 21.11.2017թ, 034-ի կողմից, բնակության հասցե՝ ՀՀ Շիրակի մարզ, Աշոցք համայնք, գյուղ Ղազանչի, 1-ին փողոց, բնակելի տուն 12), և Արմեն Արամայիսի Աթանեսյանին (անձնագիր՝ AR 0623267, տրված՝ 13.03.2018թ, 034-ի կողմից, բնակության հասցե՝ ՀՀ Շիրակի մարզ, Աշոցք համայնք, գյուղ Ղազանչի, 1-ին փողոց, բնակելի տուն 12):

2. Սույն որոշման 1-ին կետով օտարվող հողամասի վաճառքի գինը հաստատել կադաստրային արժեքի չափով՝ 184600 (մեկ հարյուր ութսունչորս հազար վեց հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամ:
3. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ղեկավարին՝ կնքել սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի առուվաճառքի պայմանագիր և օրենքով սահմանված կարգով ներկայացնել պետական գրանցման:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 76-Ա/

Լսեցին

***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՇՈՑՔ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 08-015-0035-0005 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ՀԵՆՐԻԿ ՀԱՅԿԱԶԻ ՂԱԶԱՐՅԱՆԻ, ԳՈՀԱՐ ՀԱՄԲԱՐՁՈՒՄԻ ՄԿՐՏՉՅԱՆԻ, ՀԱՅԿԱԶ ՀԵՆՐԻԿԻ ՄԿՐՏՉՅԱՆԻ ԵՎ ՀԱՍՄԻԿ ՀԵՆՐԻԿԻ ՄԿՐՏՉՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՉԱՓԻՑ ԱՎԵԼԻ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ԱՐՏՈՒՇ ՄԱՆՈՒԿՅԱՆ/***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետով, 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ավագանին ***որոշում է՝***

1. Քաղաքացիներ Հենրիկ Հայկազի Ղազարյանի, Գոհար Համբարձումի Մկրտչյանի, Հայկազ Հենրիկի Ղազարյանի և Հասմիկ Հենրիկի Ղազարյանի սեփականության իրավունքը ճանաչված, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի, Աշոցք բնակավայրի 8-րդ փողոց, բնակելի տուն 1 հասցեավորմամբ բնակելի նշանակությամբ շինություններով զբաղեցված հողամասի սահմանված չափից՝ 1000 քառակուսի մետրից ավելի օգտագործվող բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության, 3246.6 քառակուսի մետր մակերեսով հողամասն ուղղակի վաճառքի միջոցով օտարել Հենրիկ Հայկազի Ղազարյանի (անձնագիր՝ AL 0538753, տրված՝ 12.12.2023թ, 034-ի կողմից, բնակության հասցե՝ ՀՀ Շիրակի մարզ, Աշոցք համայնք, գյուղ Աշոցք, 8-րդ փողոց, բնակելի տուն 1), Գոհար Համբարձումի Մկրտչյանի (անձնագիր՝ AU 0338949, տրված՝ 02.07.2021թ, 034-ի կողմից, բնակության հասցե՝ ՀՀ Շիրակի մարզ, Աշոցք համայնք, գյուղ Աշոցք, 8-րդ փողոց, բնակելի տուն 1), Հայկազ Հենրիկի Ղազարյանի (անձնագիր՝ AV 0621235, տրված՝ 31.01.2023թ, 034-ի կողմից, բնակության հասցե՝ ՀՀ Շիրակի մարզ, Աշոցք համայնք, գյուղ Աշոցք, 8-րդ փողոց, բնակելի տուն 1) և Հասմիկ Հենրիկի Ղազարյանի (նույնականացման քարտ՝ 010755783, տրված՝ 01.03.2019թ, 048-ի կողմից, բնակության հասցե՝ ՀՀ Արմավիրի մարզ, Աշոցք համայնք, գյուղ Արաքս, Ա. Սիմոնյան փողոց, բնակելի տուն 48):
2. Սույն որոշման 1-ին կետով օտարվող հողամասի վաճառքի գինը հաստատել կադաստրային արժեքի չափով՝ 461020 (չորս հարյուր վաթսունմեկ հազար քսան) Հայաստանի Հանրապետության դրամ:
3. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ղեկավարին՝ կնքել սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի առուվաճառքի պայմանագիր և օրենքով սահմանված կարգով ներկայացնել պետական գրանցման:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 77-Ա/

Լսեցին

***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ***

## ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 22-Ի N 77-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

***/Զեկ. ԱՐՏՈՒՇ ՄԱՆՈՒԿՅԱՆ/***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 3-րդ մասով, 34-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ մասերի դրույթներով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ավագանին ***որոշում է՝***

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 22-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի 2024 թվականի բյուջեն հաստատելու մասին» N 77-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝

1) «Համայքի բյուջեի եկամուտները» հատված 1-ում՝

ա. Հոդված 7331, 1254 տողում լրացնել «1050.0» թվով,

բ. Հոդված 7452, 1393 տողում լրացնել «36000.0» թվով:

2) «Համայնքի բյուջեի ծախսերը՝ ըստ բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման» հատված 2-ում՝

ա. Բաժին 1, խումբ 1, դաս 1, 2111 տողում «204961.0» թիվը փոխարինել «205861.0» թվով,

բ. Բաժին 1, խումբ 3, դաս 1, 2131 տողում «53728.0» թիվը փոխարինել «53878.0» թվով,

գ. Բաժին 1, խումբ 6, դաս 1, 2161 տողում «87591.8» թիվը փոխարինել «90591.8» թվով,

դ.Բաժին 4, խումբ 2, դաս 1, 2421 տողում «3300.0» թիվը փոխարինել «38300.0» թվով,

ե. Բաժին 4, խումբ 9, դաս 1, 2491 տողում «-550.0» թիվը փոխարինել «-3550.0» թվով,

զ. Բաժին 8, խումբ 2, դաս 3, 2823 տողում «26400.0» թիվը փոխարինել «27400.0» թվով:

3) «Համայնքի բյուջեի ծախսերը՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման» հատված 3-ում՝

ա.Հոդված 4111, 4111 տողում «195376.2» թիվը փոխարինել «196226.2» թվով,

բ. Հոդված 4264, 4264 տողում «11500.0» թիվը փոխարինել «11700.0» թվով,

գ. Հոդված 4729, 4634 տողում «6000.0» թիվը փոխարինել «41000.0» թվով,

դ. Հոդված 4511, 4411 տողում «149870.0» թիվը փոխարինել «150870.0» թվով,

ե. Հոդված 5122, 5122 տողում «6850.0» թիվը փոխարինել «8850.0» թվով,

զ. Հոդված 5511, 5511 տողում «3817.0» թիվը փոխարինել «4817.0» թվով,

է. Հոդված 8411, 6410 տողում «-550.0» թիվը փոխարինել «-3550.0» թվով:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 78-Ն/

Լսեցին

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՂՈՐԴՈՒՄԸ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

***/Զեկ. ԱՐՏՈՒՇ ՄԱՆՈՒԿՅԱՆ/***

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի և <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ավագանին ***որոշում է՝***

Ընդունել ի գիտություն Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ղեկավարի հաղորդումը Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի 2024 թվականի բյուջեի երրորդ եռամսյակի կատարման ընթացքի մասին համաձայն հավելված N1, N2, N3-ի:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 79-Ա/

Լսեցին

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈԳՀՈՎԻՏ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ <<ԱՐԾԱԹԵ ՍՅՈՒՆ>> ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ԹԻՎ ՇԱԹ-29/601 ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ՏԵՂԱՄԱՍԻ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԸՆԴԼԱՅՆՄԱՆԸ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

***/Զեկ. ԱՐՏՈՒՇ ՄԱՆՈՒԿՅԱՆ/***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի նոյեմբերի 19-ի N 1325-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 28-րդ կեով և հիմք ընդունելով 2024 թվականի հոկտեմբերի 7-ին Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի Գոգհովիտ բնակավայրում անցկացված «ԱՐԾԱԹԵ ՍՅՈւՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից Գոգհովիտի բազալտների հանքավայրի 2019 թվականի մայիսի 14-ի թիվ ՇԱԹ-29/601 թույլտվությամբ տրամադրված տեղամասի շահագործման աշխատանքների ընդլայնման վերաբերյալ հանրային քննարկումը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ավագանին ***որոշում է՝***

1. «ԱՐԾԱԹԵ ՍՅՈւՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի Գոգհովիտ բնակավայրի բազալտների հանքավայրի արդյունահնման աշխատանքների ընդլայնմանը տալ նախնական համաձայնություն՝ հաշվի առնելով հանրային 1-ին քննարկման արձանագրային եզրակացությունը, հանրային քննարկման մասնակիցների դրական կարծիքը, ընկերության կողմից նախատեսվող գործունեության ուղղվածությունը, բնակավայրի համար նախատեսվող սոցիալ-տնտեսական բաղադրիչի առկայությունը, նոր ներդրումների կանխատեսումները և ներկայացված հիմնավորումները:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-8 Դեմ-1 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 80-Ա/

Լսեցին

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԵՐԿՐՈՐԴ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ԵՎ ԺԱՄԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

***/Զեկ. ԱՐՏՈՒՇ ՄԱՆՈՒԿՅԱՆ/***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասերով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ավագանու կանոնակարգի 91-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ավագանին ***որոշում է՝***

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ավագանու 2024 թվականի երկրորդ գումարման նստաշրջանի հերթական նիստի գումարման օր և ժամ սահմանել 2024 թվականի նոյեմբերի 12-ը՝ ժամը՝ 15:00:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 81-Ա/

Ավագանու անդամներ

ԱՐՏՈՒՇ ՄԱՆՈՒԿՅԱՆ
ՄԱՐԳԱՐԻՏ ԴԱՆԻԵԼՅԱՆ

ԳԵՂԱՄ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ
ԷԼՄԻՐԱ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
ԳԱՐԵԳԻՆ ՇԱԲՈՅԱՆ
ՁՈՆԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
ԼԻԱՆՆԱ ՀԱՅԿՅԱՆ
ՀՐԱՆՏԻԿ ՄԵԼԻՔՅԱՆ
ԹԻՆԱ ՄԵԼՔՈՆՅԱՆ

*Համայնքի ղեկավարի առաջին տեղակալ*

ԱՐՏՈՒՇ ՄԱՆՈՒԿՅԱՆ ____________

*Նիստն արձանագրեց Համլետ Ավետիսյանը* ____________________